«ՄՈԲԻԴՐԱՄ» ՓԲԸ վճարահաշվարկային կազմակերպության նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու մասին

2026-08-10

Հայտարարություն

ՀՀ կենտրոնական բանկի կողմից կիրառված պատասխանատվության միջոցի վերաբերյալ

Թույլ տրված խախտումը
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) կողմից իրականացվել է «ՄՈԲԻԴՐԱՄ» ՓԲԸ-ի (լիցենզիա՝ թիվ 15, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Արգիշտի 4/1) (այսուհետ՝ Ընկերություն) փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ներհատուկ ռիսկի, կառավարման որակի գնահատում: Գնահատման արդյունքներով արձանագրվել են Ընկերության կողմից թույլ տրված՝ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և վերջինիս հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով սահմանված որոշ պահանջների խախտումներ:

Խախտման համար կիրառված պատասխանատվության միջոցը
Խախտումը թույլ տալու համար Ընկերության նկատմամբ կիրառվել է 800,000 (ութ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով տուգանք, ինչպես նաև նախազգուշացում՝ խախտումներն սահմանված ժամկետում վերացնելու, ինչպես նաև ձեռնարկված միջոցառումների և դրանց արդյունքների վերաբերյալ Կենտրոնական բանկ 5-օրյա ժամկետում տեղեկատվություն ներկայացնելու հանձնարարականով:

Տեղեկատվություն պատասխանատվության միջոցի կիրառման որոշման օրվա դրությամբ խախտումը վերացված լինելու վերաբերյալ
Պատասխանատվության միջոց կիրառելու որոշման պահին Կենտրոնական բանկի

կողմից արձանագրված խախտումները Ընկերության կողմից մասնակի վերացված են:

Պատասխանատվության միջոցի կիրառման որոշման ամսաթիվը
05/08/2026